Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 4

Հանրապետական եռակողմ հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2017 թվական, նոյեմբերի 28, ժամը՝ 11:00

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ՝

Բորիս Խարատյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահի տեղակալ
Պողոս Գաբրիելյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արագածոտնի գործատուների տարածքային միության նախագահ
Սեդրակ Ասատրյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության անդամ, «Կոնցեռն Դիալոգ» ՍՊԸ-ի հիմնադիր ղեկավար

Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողներ՝

Սոնա Հարությունյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Արտեմ Ասատրյանի մշտական փոխարինող)
Ալբերտ Բաբայան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի գործարար միջավայրի բարելավման վարչության պետ (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Տիգրան Խաչատրյանի մշտական փոխարինող)
Ժորա Ասատրյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետի խորհրդատու (ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Դավիթ Անանյանի մշտական փոխարինող)
Զոնիկ Մարգարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության

Մուտք. / 54184-17
21 12 17

	անդամ, «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ (Հայաստանի գործատուների հանրապետական միության Արարատի գործատուների տարածքային միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Նաիրա Պապոյանի մշտական փոխարիող)
Միեր Մարկոսյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության «Որակի ասոցիացիա» գործատուների ճյուղային միության նախագահ (Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Գ. Մակարյանի մշտական փոխարինող)
Սրապիոն Առաքելյան	Թեթև արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Համլետ Դանիելյանի մշտական փոխարինող)
Հասմիկ Ջհանգիրյան	Ագրոարդյունաբերության համակարգի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ (Հայաստանի առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ծեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ, Հանձնաժողովի անդամ Շմավոն Մկրտչյանի մշտական փոխարինող)

Հրավիրվածներ՝

Թադևոս Ավետիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Ժորա Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ
Արմինե Մաթոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետի տեղակալ, աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի պետ
Արտակ Մանգասարյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության

Զբաղվածության պետական գործակալության պետ

Արման Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Հայկուհի Գևորգյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Գայանե Մանուկյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի գլխավոր մասնագետ
Անահիտ Գևորգյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության տարեցների հիմնահարցերի բաժնի պետ
Կարինե Մադոյան	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի աշխատակազմի սոցիալ-տնտեսական և աշխատանքի պաշտպանության բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Արփինե Սարգսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Սուրեն Քրմոյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տիգրան Սահակյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ

Գագիկ Մակարյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Նաիրա Պապոյան	Հայաստանի գործատուների հանրապետական միության Արարատի գործատուների տարածքային միության նախագահ
Էդուարդ Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության գործադիր տնօրեն
Համլետ Դանիելյան	Հայաստանի արդյունաբերության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Ժանետա Թորոսյան	Հայաստանի մշակույթի աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Շմավոն Մկրտչյան	Հայաստանի առևտրի, հասարակական սննդի, սպառկոոպերացիայի և ծեռներեցության աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ
Անահիտ Ասատրյան	Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության նախագահ

Օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկություններ և առարկություններ չներկայացվեցին: Հանձնաժողովը հաստատեց օրակարգը հարցերի հետևյալ հերթականությամբ.

1. **«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում և քննարկում:**
2. **«Նվազագույն աշխատավարձը Հայաստանում» ուսումնասիրության արդյունքների ներկայացում:**
3. **Տարեցների զբաղվածության ապահովման խնդիրները և հնարավորությունները Հայաստանում:**
4. **«Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության հաշվետվության ներկայացում:**
5. **«Տրանսնացիոնալ կորպորացիների և սոցիալական քաղաքականության սկզբունքների վերաբերյալ» եռակողմ հռչակագրի ներկայացում (իրազեկում):**

1. «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում և քննարկում:

«Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչության պետ Ժ. Սարգսյանը: Համառոտ ներկայացվեցին Նախագծի մշակման անհրաժեշտությունը, նպատակները, Նախագծով նախատեսվող կարգավորումները:

Մասնավորապես նշվեց, որ Նախագիծը մշակվել է «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի հայեցակարգով նշագրված առանցքային կարգավորումների հիման վրա: Նախագծի մշակման շրջանակներում ուսումնասիրվել է նաև միջազգային փորձը մի շարք երկրների կտրվածքով: Ուսումնասիրված երկրների փորձը ցույց է տալիս, որ այն երկրներում, որտեղ կան կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի ամուր ձևավորված ազգային ավանդույթներ, կամավորական գործունեությունն ու կամավոր աշխատանքն անմիջականորեն պաշտպանված են օրենքով: Կամավորի իրավական կարգավիճակի օրենսդրական ամրագրման բացակայությունն էական խոչընդոտներ է առաջացնում կամավորներին անօրինական աշխատողներից տարանջատելու հարցում: Մեկ այլ խնդիր է, երբ կամավոր աշխատանքների կատարման համար օրենսդրորեն նախատեսված չեն լինում պայմանագրային կարգավորման վերաբերյալ պարտադիր պահանջներ, ինչն էլ պատճառ է հանդիսանում, որպեսզի կամավորները զրկված լինեն որոշակի իրավական, սոցիալական և այլ երաշխիքներից:

ՀՀ-ում կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հետ կապված հարաբերությունները որոշակիորեն կարգավորված են «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, բարեգործության բնագավառի ՀՀ օրենսդրությամբ, սակայն դեռևս առկա են օրենքով կարգավորման ենթակա խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել ոլորտի կայացմանն ու հետագա զարգացմանը:

Մասնավորապես, զեկուցողի կողմից դրանցից առանձնացվեցին հետևյալ հիմնականները՝

1) կամավորական գործունեություն և կամավոր աշխատանք կատարելու հետ կապված հարաբերություններն աշխատանքային հարաբերություններից, ինչպես նաև կամավոր աշխատանքն անօրինական կամ վարձու աշխատողի աշխատանքից տարանջատելու ոչ լիարժեք իրավական կարգավորումները,

2) կամավոր և օգնություն ցուցաբերելու նպատակով կատարված աշխատանքները, ինչպես նաև կամավորի և կամավոր աշխատանք կատարող անհատի կամ խմբի կատարած աշխատանքները միմյանցից տարանջատելու մեխանիզմների բացակայությունը,

3) կամավոր աշխատանք կատարելու իրավասություն ունեցող անձանց, ինչպես նաև կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հիմնական բնագավառների և աշխատանքների շրջանակի ամրագրման անհրաժեշտությունը,

4) կամավորի և կամավորական կազմակերպության կամ կամավոր ներգրավող կազմակերպության, ինչպես նաև կամավորական կազմակերպության և կամավոր ներգրավող կազմակերպության միջև փոխհարաբերությունների պայմանագրային ոչ ամբողջական օրենդրական կարգավորումները,

5) կամավոր աշխատանքի հետ կապված ծախսերի փոխհատուցման մեխանիզմների բացակայությունը,

6) կամավոր աշխատանքի ընթացքում կամավոր աշխատանք կատարողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման, օրենքով սահմանված դեպքերում՝ կամավոր աշխատանք կատարողների կրած վնասի հատուցման մեխանիզմների, ինչպես նաև կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հետ կապված հնարավոր ռիսկերի ապահովագրության երաշխիքների բացակայությունը,

7) կամավոր աշխատանքներում քաղաքացիական հասարակության առավել լայն շրջանակների ներգրավման խթանիչ մեխանիզմների բացակայությունը,

8) կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի սուբյեկտների (կամավորական կազմակերպություններ, կամավոր ներգրավող կազմակերպություններ, կամավորներ, կամավոր աշխատանք կատարող անհատներ կամ խմբեր) հաշվառման մեխանիզմների բացակայությունը,

9) կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի սուբյեկտների հիմնական իրավունքների և պարտականությունների, պատասխանատվության (ինչպես միմյանց, այնպես էլ այլ անձանց նկատմամբ) ամրագրման բացակայությունը,

10) կամավոր աշխատանքները օտարերկրյա պետություններում, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունների քաղաքացիների կամավոր աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում կազմակերպելու վերաբերյալ ամբողջական օրենսդրական կարգավորումների բացակայությունը,

11) կամավորի աշխատանքի հետ կապված իրավական, սոցիալական, ինչպես նաև այլ երաշխիքների ապահովումը:

Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի օրենսդրական կարգավորման համապատասխան հիմքեր և միասնական օրենսդրական կարգավորումներ ապահովելու նպատակով՝ Նախագիծը ներկայացվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ՀՀ հարկային օրենսգրքում, «Բարեգործության մասին», «Հասարակական կազմակերպությունների մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ նախատեսող նախագծերի փաթեթով:

Ամփոփ ներկայացվեցին նաև վերոնշյալ նախագծերով նախատեսվող կարգավորումները:

Նախագծի և Նախագծին առնչվող այլ օրենքներում փոփոխությունների փաթեթի հակիրճ ներկայացումից հետո զեկուցողին տրվեցին հարցեր.

1. Ս. Ասատրյանի կողմից բարձրացվեց հետևյալ հարցը. Կամավորները կարող են աշխատել միայն կամավորական ընկերություններում, թե կամավորի ցանկությամբ նա կարող է աշխատանք կատարել ցանկացած գործատուի մոտ, կամ օրինակ գործատուն ունի կամավոր աշխատանքի կարիք և նա իր աշխատանքներում ներգրավում է կամավորի:

2. Բ. Խարատյանի կողմից հնչեցվեց այն մտահոգությունը, որ կամավոր աշխատանքի կիրառման ընթացքում կարող են բավականին բարդություններ առաջանալ, ինչպես նաև լինել չարաշահումներ: Միաժամանակ հարց բարձրացվեց, թե կամավոր աշխատանքների կատարման նկատմամբ որ պետական մարմինը և ինչպես է իրականացնելու հսկողություն:

3. Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի հիմնական բնագավառների և աշխատանքների հոդվածին (6-րդ) անդրադառնալով՝ Մ. Մարկոսյանը կարևորեց հետյալ հարցը. հոդվածում նախատեսված է, որ կամավորներ կարող են ներգրավվել գիտատեխնիկական և առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման, ինովացիոն ծրագրերի իրականացման աշխատանքներում: Նրա կողմից կարևորվեց այս բնագավառում գործունեություն իրականացնող գործատուներին կամավորների աշխատանքը

ներգրավելու ուղղակի հնարավորություն ընձեռելը, քանի որ շատ դեպքերում պրակտիկանտները հենց իրենք են ցանկանում մնալ գործատուի մոտ և ինչ-որ բան սովորել: Մ. Մարկոսյանը այս առնչությամբ առաջարկեց հանել պետական և մասնավոր հատվածների համար տրված սահմանափակումները:

4. Ս. Առաքելյանը բարձրացրեց հետևյալ հարցը, թե ինչու է Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված սահմանափակում, ըստ որի կամավորին և կամավոր աշխատանք կատարող անհատին կամ խմբին արգելվում է ներգրավել քաղաքական կուսակցությունների, արհեստակցական միությունների և գործատուների միությունների օգտին և (կամ) նրանց նախաձեռնությամբ կատարվող աշխատանքներին, ինչպես նաև կամավորական կազմակերպությունների և կամավոր ներգրավող կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեությանը:

Վերևում բարձրացված հարցերին տրվեցին հետևյալ պատասխանները.

1. Ս. Ասատրյանի կողմից բարձրացված հարցի կապակցությամբ տեղեկացվեց, որ Նախագծի համաձայն՝ կամավոր աշխատանքները կարող են իրականացվել երեք դրսևորումներով. կամավորական կազմակերպությունների միջոցով, կամավոր ներգրավող կազմակերպության միջոցով և որպես անհատ կամ խումբ կամավոր աշխատանք իրականացնելով:

2. Բ. Խարատյանի բարձրացրած հարցի առնչությամբ Ժ. Սարգսյանի կողմից նշվեց, որ Նախագծի 34-րդ հոդվածում նախատեսվել է, որ կամավորների առողջության պահպանման և աշխատանքի անվտանգության ապահովման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնում է ՀՀ առողջապահական տեսչական մարմինը: Բ. Խարատյանի կողմից բարձրացված հարցի առնչությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանի կողմից միաժամանակ տեղեկացվեց, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում անօրինական աշխատանքի նկատմամբ պետական վերահսկողության իրականացման գործառույթներ են վերապահված հարկային մարմիններին և նախատեսված է նաև պատասխանատվության միջոցների կիրառման հնարավորություն:

3. Մ. Մարկոսյանի կողմից նշված հարցի առնչությամբ Ժ. Սարգսյանը տեղեկացրեց, որ շահույթ ստանալու նպատակ հետապնդող կարգմակերպություններին, համաձայն Նախագծի, նման հնարավորություն չի կարող տրվել: Այդ պարագայում հարցը ենթակա է կարգավորման ՀՀ աշխատանքային օրեսգրքի 201.1-ին հոդվածով:

4. Ս. Առաքելյանի հարցի վերաբերյալ տեղեկացվեց, որ այս առնչությամբ նոր բան չի արվել: Նման դրույթ ամրագրված է նաև «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով: Որպես օրինակ նշվեց, որ օրինակ չի կարելի կամավորներին հավաքել և տանել ցույցերի:

Ամփոփելով Նախագծի շուրջ ծավալված քննարկումը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նշեց, որ հաշվի առնելով Նախագծի կարգավորումների դաշտը, բնական է, որ բավականին շատ կարող են լինել Նախագծի վերաբերյալ մտահոգություններն ու հարցերը: Սակայն, մի բան միանշանակ է, որ այս դաշտը իսկապես իրավական կարգավորումների ամբողջականացման կարիք ունի: Ներկա փուլում խնդիր պետք է դնել հնարավորինս առանց վնասելու տալ անհրաժեշտ

օրենսդրական հիմքերը, որոնք, բնական է, պրակտիկ կիրառությունից հետո դարձյալ փոփոխությունների կարիք կունենան: Հանձնաժողովի Նախագահի կողմից որպես Նախագծի կարևոր նպատակներից մեկը առանձնացվեց երիտասարդների մուտքը աշխատաշուկա դյուրինացնելը: Հանձնաժողովի նախագահը միաժամանակ նշեց, որ եթե կան այլ մտահոգություններ կարող են գրավոր ներկայացվել, որոնք կքննարկվեն:

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

1.1. «Կամավորական գործունեության և կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծն ընդունել ի գիտություն:

2. «Նվազագույն աշխատավարձը Հայաստանում» ուսումնասիրության արդյունքների ներկայացում:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Սարգսյանը: Ընդհանուր առմամբ ամփոփ ներկայացվեցին վերլուծության արդյունքները: Նշվեց, որ իրականացված աշխատանքի նպատակն է եղել գնահատել նվազագույն աշխատավարձի չափը Հայաստանի Հանրապետությունում և թե որքանով է այն օրինաչափ երկրի տնտեսության զարգացումներին:

Տեղեկացվեց, որ հետազոտության շրջանակներում դիտարկվել են շուրջ 26 երկրներ, որոնք հիմնականում եվրոպական երկրներ են՝ զարգացած և զարգացող տնտեսություններով: Դիտարկվել է այդ երկրներում նվազագույն աշխատավարձի և մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հարաբերակցությունը: Դիտարկված երկրներում միջինում այս ցուցանիշը կազմել է 3.24: Հայաստանում այն կազմում է 4.06: Այսինքն, ըստ էության, Հայաստանում այդ ցուցանիշի շեղումն այնքան էլ մեծ չէ:

Նշվեց, որ երկրորդ մոտեցումը, որը դիտարկվել է, և որը նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ԱՄԿ) առաջարկած ցուցանիշն է, նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցությունն է: Հայաստանում այդ ցուցանիշը կազմում է 41.5%, ինչը ԱՄԿ-ի առաջադրած մեծությունից ավելին է, ինչը նշանակում է, որ այդ ցուցանիշի տեսանկյունից Հայաստանն այնքան էլ վատ կետում չի գտնվում:

Երրորդ դեպքում իրականացվել է գործոնային էկոնոմետրիկ վերլուծություն՝ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի, միջին աշխատավարձի, գլոբալ ձեռնարկատիրակատիրական ինդեքսի գործոնների հիման վրա: Մոդելի արդյունքներով ստացվում է, որ գնահատված նվազագույն աշխատավարձի չափը իրատեսական է և համադրելի ՀՀ մակրոտնտեսական ընդհանուր իրավիճակի հետ:

Նշվեց, որ նվազագույն աշխատավարձի չափի գնահատման տեսանկյունից միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կարելի է ընդհանրական ներկայացնել նվազագույն աշխատավարձի սահմանման 5 գործող գործոնային մոդելներ՝

- Ըստ տարիքի. սա առաջնային կիրառելիության է ՀՀ պարագայում, որովհետև անհրաժեշտ է հստակ տարանջատել մարդկանց՝ ըստ իրենց աշխատանքային ստաժի, ինչը պայմանավորող կարևոր գործոն է տարիքը:
- Ըստ կրթական որակավորման մակարդակի. «աշխատավարձային արդարության» պահպանման համատեքստում այս փորձը բավական արդյունավետ է, քանի որ մարդկանց դասակարգում է ըստ նրանց որակավորման աստիճանի: Այս

պարագայում բարձր որակավորում ունեցող անձինք ստանում են առավելություն աշխատաշուկայում:

- Երիտասարդների համար տարբերակված մոտեցմամբ. միջազգային փորձը ցույց է տալիս, որ բավականին կիրառելի է երիտասարդների նկատմամբ նվազագույն աշխատավարձի դիվերսիֆիկացիոն գործիքի կիրառումը: Հաշվի առնելով նրանց աշխատանքային հմտությունների պակասը՝ սա հնարավորություն կտա գործատուներին ավելի շատ երիտասարդների ընդգրկել աշխատանքի շուկա:
- Ըստ ոլորտների. փորձի կիրառելիությունը բավական արդյունավետ կլինի ՀՀ պարագայում, եթե ըստ օրենքով սահմանված գերակա ուղղությունների և տնտեսության հատվածների սահմանվեն նվազագույն աշխատավարձի ավելի բարձր դրույքաչափեր:
- Ըստ մարզերի. սրա կիրառելիությունը ՀՀ պարագայում դեռևս վերապահումային է, քանի որ մեզ մոտ առկա է ստվերային տնտեսության բարձր աստիճան:

Ուսումնասիրության արդյունքների ներկայացումից հետո ներկաների կողմից բարձրացվեցին հարցեր, հնչեցվեցին կարծիքներ և մտահոգություններ քննարկված հարցերի վերաբերյալ: Մասնավորապես.

1. Ս. Ասատրյանի կողմից բարձրացվեց հետևյալ հարցը. բոլորի համար ակնհայտ է, որ աշխատանքի ոլորտում բավականին լուրջ խնդիր է ստվերային, թաքնված զբաղվածության առկայությունը: Ուսումնասիրության արդյունքներում համապատասխան հաշվարկներն ինչ մեթոդով են իրականացվել, որպեսզի ստացված արդյունքները լինեն արժանահավատ:
2. Ժ. Ասատրյանի կողմից հարց հնչեցվեց, թե արդյոք անցկացվել է նվազագույն աշխատավարձի համեմատական նվազագույն զամբյուղի հետ:
3. Քննարկված հարցի շուրջ իր տեսակետներն ու մտահոգությունները ներկայացրեց նաև Բ. Խարատյանը: Նշվեց, որ իսկապես նվազագույն աշխատավարձը այն խնդիրն է, որը շատ կարևոր է և հուզում է բոլորին: Նվազագույն աշխավարձի սահմանման հարցեր ներառված են նաև Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող ծրագրում: Նշելով, որ իսկապես շատ լավ և խորությամբ աշխատանք է տարվել, Բ. Խարատյանը որպես խնդիր նշեց, որ ուսումնասիրությունում որևէ բան չի ասվում կենսապահովման նվազագույն զամբյուղի մասին: 2004 թվականին ՀՀ-ի կողմից ընդունվել է «Կենսապահովման նվազագույն զամբյուղի և կենսապահովման նվազագույն բյուջեի մասին» ՀՀ օրենքը, որտեղ տրված են համապատասխան ընթացակարգեր, համաձայն որի առաջին երեք տարվա ընթացքում կառավարությունը պետք է մշակեր նվազագույն զամբյուղի կազմն ու կառուցվածքը, իսկ հետագայում այն պետք է սահմանվեր օրենքով: Սակայն, ներկայումս երկրում դա չի արվում: Ըստ Բ. Խարատյանի, այդ ամենով հանդերձ նվազագույն աշխատավարձը չունի հիմնավորում: Բ. Խարատյանը կարևորեց, որ ներկայացված ուսումնասիրության արդյունքները հիմք ընդունելով քայլեր ձեռնարկվեն լուծումներ գտնելու և այնպիսի նվազագույն աշխատավարձ սահմանելու համար, որն իրականում կբավարարի աշխատողի և նրա ընտանիքի անդամների պահանջմունքները:

Բարձրացված հարցերի և մտահոգությունների առնչությամբ ներկայացվեցին հետևյալ պատասխաններն ու տեսակետները.

1. Բարձրացված առաջին հարցի կապակցությամբ Ա. Սարգսյանի կողմից նշվեց, որ ուսումնասիրության շրջանակներում կիրառվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության

տնային տնտեսությունների հետազոտության բազան, որտեղ տնային այցելությունների ժամանակ լրացված հարցաթերթում եկամտի չափն է օգտագործվում: Ուսումնասիրության շրջանակներում այս իմաստով ստվերը շրջանցվել է:

2. Ժ. Ասատրյանի կողմից բարձրացված հարցի առնչությամբ Ա. Սարգսյանի կողմից նշվեց, որ վերլուծությունում նվազագույն զամբյուղի չափը նույնպես հիշատակվում է: Բնականաբար դա այն կետն է, որը դրված է նվազագույն աշխատավարձի քաղաքականության հիմքում, որին ձգտում է հասնել նվազագույն աշխատավարձը:

3. Բ. Խարատյանի մտահոգության ու դիտարկումների առնչությամբ Հանձնաժողովի նախագահի կողմից նշվեց, որ իսկապես նշված ուսումնասիրության քննարկումը Հանձնաժողովի նիստում կարևորվում է այն իմաստով, որ նվազագույն աշխատավարձին վերաբերող հարցերին արդրադարձ է կատարված նաև Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի կիրարկումն ապահովող միջոցառումներոի ծրագրով: ՀՀ-ում ներկայում նվազագույն աշխատավարձը որոշվում է քաղաքական որոշումներով՝ ելնելով երկրի հնարավորություններից, քանի որ նվազագույն աշխատավարձի ծանրաբեռնվածությունն առաջին հերթին ընկնում է հենց պետական բյուջեի վրա: Ա. Ասատրյանը նշեց, որ ուսումնասիրության արդյունքները Հանձնաժողովում ներկայացնելու, և առհասարակ նվազագույն աշխատավարձին առնչվող հարցը քննարկելու նպատակը մեկն է, որպեսզի եռակողմ քննարկումների արդյունքում ի վերջո մշակվի մի մոդել, որով դրված մեթոդաբանությունը ընդունելի կլինի բոլոր երեք կողմերի համար և որը հնարավորություն կտա համապատասխան հիմնավորումներից ելնելով սահմանել նվազագույն աշխատավարձի հիմնավորված չափ:

4. Հանձնաժողովի նախագահի կողմից նշված համապատասխան մոդել մշակելու հարցի շրջանակներում Ս. Հարությունյանի կողմից նշվեց, որ այդ մոդելի ու մեթոդաբանության քննարկման շրջանակներում շատ կարևոր է անդրադառնալ երկու հարցի՝ թաքնված զբաղվածություն և գնաճ: Ս. Հարությունյանն առաջարկեց ընդլայնել հետազոտությունների դաշտը, փորձել բացահայտել այն պատճառները, որոնք բերում են թաքնված զբաղվածության, և գտնել այն գործուն մեխանիզմները, որոնցով գործատուն շահագրգռված կլինի չունենալ թաքնված զբաղվածություն:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

2.1. Հիմք ընդունելով ներկայացված ուսումնասիրության արդյունքները՝ ԱՄԿ-ի ներգրավմամբ և անմիջական աջակցությամբ եռակողմ քննարկումների արդյունքում ձևավորել մոդել, որը նվազագույն ամսական աշխատավարձի հիմնավորված չափի որոշման հնարավորություն կտա:

3. Տարեցների զբաղվածության ապահովման խնդիրները և հնարավորությունները Հայաստանում:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Թադևոս Ավետիսյանը: Նշվեց, որ Հայաստանում տարեցների կայուն զբաղվածության ապահովման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը հանդիսանում է տարեցներին ուղղված պետական քաղաքականության երկարաժամկետ գերակայություններից: Այս խնդիրը Հայաստանում կարևորվում է այն իմաստով, որ Հայաստանը աշխարհի ծերացող երկրների շարքում: Բնականաբար այդ գործընթացներում

իրենց կարևոր դերը պետք է ունենան նաև սոցիալական գործընկերներն ու քաղաքացիական հասարակությունը:

Թ. Ավետիսյանի կողմից նշվեց, որ իրականացված իրավիճակային վերլուծության, առանձին երկրների միջազգային հաջողված փորձի, տարեցների ոլորտին վերաբերող միջազգային գործընթացների ու փաստաթղթերի ուսումնասիրությունների, շահագրգիռ պետական և ոչ պետական ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ մասնագիտական անհրաժեշտ քննարկումների ամփոփ արդյունքներով՝ առաջիկա երեք տարիների համար մշակվել են Հայաստանում տարեցների կայուն զբաղվածության խթանման և աշխատաշուկայում արդյունավետ ներառման գործողություններն ու քայլերը: Դրանք են.

1. որպես առաջին գործողություն, նախատեսվում է իրականացնել աշխատաշուկայի խորքային հետազոտություն: Մանրամասն ներկայացվեցին այս ուղղությամբ իրականացվելիք քայլերը.

2. 2018թ. համար առաջարկվում է նախաձեռնել տարեցների աշխատանքին և զբաղվածությանը վերաբերող իրավական կարգավորումների վերանայում: Ներկայացվեցին այս ուղղությամբ նախատեսվող քայլերը ևս.

3. երկարատև գործազուրկ, ինչպես նաև աշխատունակության կորուստ, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող տարեցների զբաղվածության ապահովման համար կարևոր ուղղություն է սոցիալական ձեռնարկությունների արդյունավետ մոդելների ներդրումը՝ «պետական-մասնավոր» փոխշահավետ գործընկերության հենքի վրա: Ներկայացվեցին նաև այս ուղղությամբ հնարավոր քայրերը.

4. նշվեց, որ կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում ևս առաջարկվում են կոնկրետ քայլերի իրականացումը, որոնք ևս կարող են որոշակի դեպքերում լիարժեք խթանել տարեցների երկարակեցությունը աշխատանքային հարաբերություններում.

5. 2018թ. կամավոր աշխատանքի ինստիտուտի բազմոլորտ ներդրմանը զուգընթաց՝ առաջարկվում է փորձարկել կոնկրետ ծրագրեր, որոնք ուղղված կլինեն տարեցների շրջանում կամավոր աշխատանքի խթանմանը.

6. առաջարկվող ծրագրերի իրականացումը պետք է զուգորդվի հանրության շրջանում, հատկապես՝ տարեցների, կատարվող աշխատանքների և արդյունքների մասին լայն իրազեկմամբ:

Օրակարգի 3-րդ հարցի շրջանակներում զեկուցողին հարցեր չներկայացվեցին:

Ամփոփելով օրակարգի 3-րդ հարցի շրջանակներում ներկայացված տեղեկատվությունը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նշեց, որ ներկայացված խնդիրներն ու այդ ուղղությամբ իրականացվելիք քայլերը կարևորագույն աշխատանքներից մեկն են: Հանձնաժողովի նախագահը կարևորեց այդ գործընթացներում սոցիալական գործընկերների ակտիվ մասնակցությունը, ելնելով այն հանգամանքից, որ վերոնշյալ հարցերը միայն զուտ օրենսդրական փոփոխություններով ու համապատասխան կարգավորումների ամրագրմամբ չեն կարող լուծվել: Այստեղ անհրաժեշտ է ակտիվ առարկայական համատեղ աշխատանք: Նախարարը միաժամանակ հույս հայտնեց, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որպես այդ գործընթացները համակարգող մարմին, կստանա սոցիալական գործընկերների գործուն աջակցությունն այդ գործընթացներում:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

3.1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն և հնարավորինս արդյունավետ համագործակցել տարեցների զբաղվածության ապահովման խնդիրների լուծման գործընթացներում:

4. «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության հաշվետվության ներկայացում:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՄԿՄԿ) տնօրեն Հ. Գևորգյանը: Ընդհանուր առմամբ նշվեց, որ ՄԿՄԿ-ի նպատակը մասնագիտական կողմնորոշման և կարիերայի կառավարման համակարգի կառույցներին մեթոդաբանության ապահովումն է, ինչպես նաև ոլորտի կադրերի կարողությունների և հմտությունների զարգացումը՝ ոչ ֆորմալ ուսուցումների, ուսումնավարժանքների, քննարկումների, շարունակական խորհրդատվության միջոցով:

ՀՀ-ում մասնագիտական կողմնորոշման համակարգի բարեփոխումները ձեռնարկվել են 2012թ., երբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգում գործող «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման կենտրոն» ՊՈԱԿ-ին վերապահվեց մասնագիտական կողմնորոշման և կարիերայի համակարգի համապատասխան մասնագետներին մեթոդաբանությամբ ապահովման, վերապատրաստման, նաև իրազեկման գործառույթները: ՊՈԱԿ-ն անվանափոխվեց «Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն»-ի:

Համառոտ ներկայացվեցին ՄԿՄԿ-ի երկու բաժինների գործառույթները: Նշվեց, որ ՄԿՄԿ-ն ունի նաև խորհուրդ: Ամփոփ ներկայացվեցին խորհրդի նպատակը, խորհրդի կողմից իրականացվող աշխատանքները:

Տեղեկացվեց, որ ստեղծման պահից մինչ օրս ՄԿՄԿ կողմից իրականացված բազմաթիվ ակտիվ ծրագրերի մասին՝ մասնագիտությունների օրեր, կարիերայի տոնավաճառներ, զբաղմունքների տոնավաճառ: Նշվեց, որ 2016-17թթ. ընդլայնվել են մասնագիտական կողմնորոշման համակարգի կառույցների շրջանակը. կարևորելով սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների մասնագիտական կողմնորոշման խնդիրը՝ 2016թ. ՄԿՄԿ կողմից վերապատրաստվել են նաև Երևանի երեխաների խնամքի և աջակցության կենտրոնների մասնագիտական խմբի մասնագետները, իսկ 2017թ. ՄԿՄԿ առաջարկով մեկնարկել է Զորացրվող զինծառայողների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման փորձնական ծրագիրը, որի հիմնական նպատակն է մինչ զորացրումը զինծառայողների կարիերայի անհատական պլանավորումն ու անհրաժեշտ տեղեկատվության և խորհրդատվության տրամադրումը:

Տեղեկացվեց նաև, որ ՄԿՄԿ գործունեությունը, միջոցառումների ընթացիկ արդյունքները պարբերաբար հրապարակվել են: Իրականացվել է իրազեկում զանգվածային լրատվամիջոցներով, սոցիալական ցանցերով և իրազեկման հանդիպումների միջոցով: ՄԿՄԿ գործունեության արդյունավետության մասին մոնիթորինգային զեկույցներ են հրապարակել Եվրոպական կրթական հիմնադրամը, ԵՄ բյուջետային աջակցության 1-ին ծրագրի մոնիթորինգի հանձնաժողովը, որոնցում բարձր են գնահատվել ՄԿՄԿ անձնակազմի կարողությունները, մեթոդաբանությունը, գործունեության ցուցանիշները և կայունությունը:

Ամփոփ ներկայացվեց նաև ՄԿՄԿ-ի գործունեության մասին տեղեկատվություն ըստ ուղղությունների:

Միաժամանակ ներկաներին տեղեկացվեց, որ համաձայն ՀՀ կառավարության 22.09.2017թ. N 1159-Ն որոշման՝ ներկայումս ՄԿՄԿ-ն վերակազմակերպման փուլում է: Այն միանում է «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին որպես մասնաճյուղ:

Հ. Գևորգյանի կողմից ՄԿՄԿ-ի գործունեության վերաբերյալ տեղեկատվության ներկայացումից հետո ներկաների կողմից հնչեցվեցին կարծիքներ, դիտարկումներ և մտահոգություններ կապված ՀՀ-ում մասնագիտական կողմնորոշման համակարգի, ինչպես նաև ՄԿՄԿ-ի կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ:

Մասնավորապես.

1. Մ. Մարկոսյանի կարծիքով առաջնահերթ խնդիրը, որ երկրում առկա է, հանրակրթության համակարգում առկա բացերն են: Համաձայն Մ. Մարկոսյանի դպրոցներում հանրակրթության համակարգում դասավանդումն ու դպրոցական ծրագրերը վերանայման անհրաժեշտություն ունեն: Նրա կարծիքով այս համակարգում առկա բացերի պատճառով է, որ ստեղծված է ՄԿՄԿ-ն: Ըստ Մ. Մարկոսյանի ՄԿՄԿ-ն ավելի շատ անելիքներ կարող է ունենալ տարեցների զբաղվածության խնդիրների լուծման հարցում:
2. Պ. Գաբրիելյանը կարևորելով ՄԿՄԿ-ի կողմից իրականացված աշխատանքները, միաժամանակ մտահոգություն հայտնեց, որ ՄԿՄԿ-ի առջև բավականին լուրջ խնդիր է դրված և հարց բարձրացվեց, թե արդյոք կարող է ՄԿՄԿ-ն այդ աշխատանքը իրականացնել սահմանափակ ռեսուսներով:
3. Ս. Առաքելյանը առաջարկեց ընդլայնել ՄԿՄԿ խորհրդի կազմը:
4. Հարցեր տրվեցին նաև կապված կենտրոնի բյուջեի, կենտրոնի ֆինանսավորման, կենտրոնի աշխատողների վարձատրության հետ, որոնց վերաբերյալ Հ. Գևորգյանի կողմից տրվեցին համապատասխան պարզաբանումներ:
5. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանի կողմից կարևորվեց նաև ՄԿՄԿ խորհրդի նիստերին սոցիալական գործընկերների մասնակցության հարցը:

Ամփոփելով Հ. Գևորգյանի կողմից ներկայացված տեղեկատվությունը և ՄԿՄԿ գործունեության վերաբերյալ արտահայտված կարծիքները՝ Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նշեց, որ ՄԿՄԿ կողմից իրականացվող աշխատանքներն իր կողմից իսկապես կարևորվում են և, որ կենտրոնը թեկուզ սահմանափակ ռեսուրսներով, բայց բավականին առաջընթաց է արձանագրել: Հանձնաժողովի նախագահն ընդգծեց, որ բոլոր կողմերի նպատակը, որ ներկայում կարևորվում է ՀՀ-ում ողջ կյանքի ընթացում անձի մասնագիտական կողմնորոշման գործուն համակարգի ստեղծումն ու զարգացումն է: Ա. Ասատրյանը միաժամանակ նշեց, որ վերևում բարձրացված հարցերն ու մտահոգությունները կարող են քննարկվել ՄԿՄԿ խորհրդում և առաջարկեց ՄԿՄԿ գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

4.1. **«Մասնագիտական կողմնորոշման մեթոդական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն:**

5. «Տրանսնացիոնալ կորպորացիների և սոցիալական քաղաքականության սկզբունքների վերաբերյալ» եռակողմ հռչակագրի ներկայացում (իրազեկում):

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության պետի տեղակալ, աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի պետ Արմինե Մաթոսյանը: Նշվեց, որ տրանսնացիոնալ կորպորացիաների և սոցիալական քաղաքականության սկզբունքների վերաբերյալ եռակողմ հռչակագիրը (այսուհետ՝ Հռչակագիր) ընդունվել է Աշխատանքի Միջազգային Բյուրոյի Կառավարող մարմնի կողմից՝ վերջինիս 204-րդ նստաշրջանում և ենթարկվել փոփոխությունների 2000, 2006 և 2017 թվականներին: Հռչակագրում ամրագրված սկզբունքները տրանսնացիոնալ կորպորացիաների, կառավարությունների և գործատուների ու աշխատողների կազմակերպությունների համար ուղենիշներ են այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են զբաղվածությունը, մասնագիտական վերապատրաստումները, աշխատանքի պայմաններն ու կենսապայմանները և արտադրական հարաբերությունները:

Բոլոր շահագրգիռ մարմինների կողմից Հռչակագրի դրույթների իրականացումը կնպաստի արժանապատիվ աշխատանքի, ներառական տնտեսական աճի և կայուն զարգացման նպաստավոր մթնոլորտի ձևավորմանը:

Հռչակագրի նպատակն է խրախուսել այն դրական ներդումը, որ տրանսնացիոնալ կորպորացիաները կարող են ունենալ տնտեսական և սոցիալական առաջընթացի և բոլորի համար արժանապատիվ աշխատանքի իրականացման գործընթացում, ինչպես նաև նվազագույնի հասցնել ու հարթել այն դժվարությունները, որոնք կարող են առաջանալ նրանց գործունեության իրականացման արդյունքում:

Հռչակագրի համաձայն՝ տրանսնացիոնալ կորպորացիաները պետք է լիովին հաշվի առնեն իրենց գործունեությունը ծավալած երկրներում իրականացվող քաղաքականության ընդհանուր խնդիրները: Նրանց գործողությունները պետք է համապատասխանեն ազգային օրենքին և համահունչ լինեն տվյալ երկրի զարգացման առաջնահերթություններին, սոցիալական նպատակներին ու կառուցվածքին:

Ամփոփ ներկայացվեցին Հռչակագրի սկզբունքներն ու պահանջներն ըստ ուղղությունների:

Նշվեց, որ զբաղվածության խթանման հարցում որպես Հռչակագրում ամրագրված հիմնական պահանջ կարելի է առանձնացնել այն, որ տրանսնացիոնալ կորպորացիաները առաջնահերթություն պետք է տան ընդունող երկրի քաղաքացիների զբաղվածությանը, նրանց մասնագիտական աճին, խթանմանն ու առաջխաղացմանը բոլոր մակարդակներում:

Սոցիալական ապահովության խնդիրների մասով Հռչակագիրը սահմանում է, որ կառավարությունները, պայմաններից ելնելով, պետք է ստեղծեն ու պահեն հիմնական սոցիալական պաշտպանության երաշխիքներ՝ որպես իրենց ազգային սոցիալական ապահովության համակարգերի հիմնարար տարր և հիմնական սոցիալական պաշտպանության երաշխիքներն իրականացնեն սոցիալական ապահովության ընդլայնման ռազմավարության շրջանակում:

Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վերացման պահանջի մասով Հռչակագրով ամրագրվում է, որ դրա համար կառավարությունները պետք է ուղղորդեն և օժանդակեն գործատուներին ու կորպորացիաներին՝ արդյունավետ միջոցներ ձեռնարկելու՝ հարկադիր կամ պարտադիր աշխատանքի ռիսկերի վերհանման, կանխման ու նվազեցման համար:

Թվարկվեցին և հակիրճ ներկայացվեցին նաև Հռչակագրով ամրագրված մի շարք սկզբունքներ ևս. մասնավորապես երեխայի աշխատանքի փաստացի վերացման, հավասար հնարավորությունների և վերաբերմունքի պահպանման, աշխատանքի անվտանգության, ուսուցման, աշխատանքի և կյանքի պայմանների (աշխատավարձեր, նպաստներ, աշխատանքի պայմաններ, անվտանգություն, առողջություն) և այլն:

Հարցի զեկուցումից հետո ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Թ. Ավետիսյանի կողմից կարևորվեցին Հռչակագրով ամրագրված կարգավորումներն այն իմաստով, որ այն լավ հնարավորություն է, որպեսզի սոցիալական գործընկերները կարողանան հստակ պահանջներ առաջադրել աշխարհի մի շարք երկրներում մասնաճյուղեր ունեցող և ՀՀ-ում ևս գործունեություն իրականացնող կազմակերպություններին:

Ամփոփելով օրակարգի 5-րդ հարցը, Հանձնաժողովի նախագահի կողմից առաջարկվեց այն ընդունել ի գիտություն:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ Հանձնաժողովը որոշեց.

5.1. «Տրանսնացիոնալ կորպորացիների և սոցիալական քաղաքականության սկզբունքների վերաբերյալ» եռակողմ հռչակագրի վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **Ա. ՍԱՐԳՍՅԱՆ**